ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎԳԵՆԻ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 8-րդ փողոցը(սկսվում է Ներքին Շենգավիթ 11-րդ փողոցից, հասնում՝ Շահամիրյանների փողոց) անվանակոչել հայ հնագետ Եվգենի Բայբուրդյանի անվամբ՝ «Եվգենի Բայբուրդյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՓԵԹԱԿՉՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎԳԵՆԻ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ նշանավոր հնագետ և մտավորական Եվգենի Բայբուրդյանը ծնվել է 1898 թ. սեպտեմբերի 6-ին Նոր Նախիջևան քաղաքում (այժմ՝ Դոնի Ռոստով քաղաքի մաս): 1925 թ. ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի էթնոլոգիական ֆակուլտետի հնագիտության բաժինը: Իր ուսուցիչ, պրոֆ. Վ. Գորոդցովի ղեկավարությամբ մասնակցել է Կոստրոմայում, Վլադիմիրում և այլ մարզերում կազմակերպված հնագիտական արշավներիին:

1926 թ. նա ԽՍՀՄ Արևելքի ժողովուրդների էթնիկական և ազգային մշակույթների գիտահետազոտական ինստիտուտի կովկասյան բաժնի գերհաստիքային ասպիրանտ է դառնում: Նույն թվականին Անդրկովկասում հնագիտական աշխատանքների անցկացման համար մեկնում է Հայաստան՝ Հայկական ԽՍՀ թանգարանների և հուշարձանների հարցերով զբաղվելու համար:

Եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի և Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի գիտական աշխատող (1926-1938 թթ.):

Ե. Բայբուրդյանը ենթարկվել է բռնաճնշումների, ձերբակալվել է 1939 թ. դեկտեմբերի 29-ին, և 1941 թ. սեպտեմբերի 7-ին՝ գնդակահարվել է: Հետմահու արդարացվել է:

Չնայած իր կարճ կյանքին՝ Ե. Բայբուրդյանն անգնահետելի ներդրում է ունեցել ոչ միայն Հայաստանի, այլ նաև տարածաշրջանի հնագիտության զարգացման ոլորտում: Հենց Բայբուրդյանի ղեկավարությամբ առաջին անգամ 1936 թվականին սկսվել են Երևանի տարածքում գտնվող նշանավոր Շենգավիթ հուշարձանի պեղումները: Պետք է նշել, որ Բայբուրդյանի կողմից արված շերտագրական մի շարք դիտարկումներ արդիական են մինչ օրս:

Ե. Բայբուրդյանն է, որ համաշխարհային հնագիտության մեջ ներդրել է «շենգավիթյան մշակույթ» տերմինը և բացահայտել տարածաշրջանային հնագիտության անչափ կարևոր մի մշակույթ, որը հետագայում ստացել է նաև «կուր-արաքսյան» և/կամ «շենգավիթյան» անվանումը: Շենգավիթյան մշակույթի օրրաներից

մեկը եղել է Արարատյան դաշտավայրը: Այս մշակույթը հյուսիսում տարածվել է մինչև Դաղստան, հարավում՝ մինչև Իսրայել և Պեղեստին:

Ե. Բայբուրդյանը մասնագիտական կյանքն անմիջականորեն կապված է Երևան քաղաքի հետ: Նրա կողմից հետազոտված հիմնական հուշարձանները գտնվում են Երևանում, որոնց թվում են Շենգավիթը, Մուխաննաթ թափա և Կարմիր Բլուրը:

Եվգենի Բայբուրդյանի անվամբ փողոց անվանակոչելու առաջարկով Երևանի ավագանու մշակույթի, կրթության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին միջնորդությամբ դիմել են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Միխաիլ Բադալյանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 8-րդ փողոցն անվանակոչել հայ հնագետ Եվգենի Բայբուրդյանի անվամբ՝ «Եվգենի Բայբուրդյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԼԵՎՈՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՓԵԹԱԿՉՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎԳԵՆԻ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Եվգենի Բայբուրդյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ԵՎԳԵՆԻ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Եվգենի Բայբուրդյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՀԱՅԿ ՄԻՐԶՈՅԱՆ**

ԼԵՎՈՆ ՋԱՔԱՐՅԱՆ

ՍԻՓԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՓԵԹԱԿՉՅԱՆ